

**ՀՀ Սյունիքի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ Մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար**

**1.Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի առաջատար մասնագետ/ ծածկագիր՝ 68-3.2-35/:**

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է ՀՀ Սյունիքի մարզում գործող հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ տարվող կազմակերպական աշխատանքներին, մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման աշխատանքներին, մարզի տարածքում համապատասխան մարզային ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների վերացման, տարերային և տեղնյութիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ մարզպետի կողմից կազմակերպվող և համակարգվող աշխատանքներին, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <բ> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Մրցույթը կանցկացվի 2015թ. ապրիլի 15-ին ժամը 14<sup>30</sup>-ին, Մարզպետարանի շենքում, ք.Կապան:

**2. Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 68-3.2-31)**

Բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում և համապատասխան առաջարկություն է ներկայացնում մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցման, պահպանության և շահագործման հետ կապված հարցերի ուղղությամբ, մասնակցում է մարզի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումներին և կենդանիների հիվանդությունների կանխման ու վերացման աշխատանքներին, մասնակցում է համայնքների ղեկավարների գործունեության ուսումնասիրությանը գյուղատնտեսության բնագավառում, իր իրավասությունների շրջանակում նախապատրաստում է բաժնի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- Գյուղական և ձկնային տնտեսություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <բ> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Մրցույթը կանցկացվի 2015թ. ապրիլի 15-ին ժամը 16<sup>30</sup>-ին, Մարզպետարանի շենքում, ք.Կապան:

**3. Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ / ծածկագիր՝ 68-3.1-6/:**

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, իրականացնում է աշխատակազմի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից մարզպետի և աշխատակազմի ղեկավարի քննարկմանը ներկայացվող իրավական ակտերի՝ որոշումների, կարգադրությունների և հրամանների նախագծերի համապատասխանության ուսումնասիրումը ՀՀ

գործող օրենսդրությանը, տալիս է դրանց վերաբերյալ համապատասխան եզրակացություն, իրականացնում է մարզային ենթակայության ընկերությունների, հիմնարկների ու կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների ուսումնասիրում և ծագած խնդիրների լուծման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Բաժնի պետին ներկայացնում է համապատասխան առաջարկություններ, իրականացնում է մարզային ենթակայության ընկերությունների, հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարների կողմից արձակած և ընդունած իրավական ակտերի ուսումնասիրում, օրենսդրությանը հակասելու դեպքում առաջարկություն է ներկայացնում Բաժնի պետին օրենսդրությամբ սահմանված կարգով վերացնելու կամ կասեցնելու համար, իրականացնում է մարզպետարանում վարչական վարույթի վերաբերյալ գործերի կազմման և վարման աշխատանքները:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- Իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:
- Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <բ> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

**Մրցույթը կանցկացվի 2015թ. ապրիլի 16-ին ժամը 10<sup>00</sup>-ին, Մարզպետարանի շենքում, ք.Կապան:**

#### **4. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 68-3.1-10)**

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը, ընտանիքի կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված մարզային և տեղական նշանակության ծրագրերի ձևավորման և դրանց կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակմանը:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- Առողջապահություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:
- Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <բ> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

**Մրցույթը կանցկացվի 2015թ. ապրիլի 16-ին ժամը 12<sup>00</sup>-ին, Մարզպետարանի շենքում, ք.Կապան**

#### **Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Սյունիքի մարզպետարան (ք. Կապան, Գ. Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.**

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս):
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին:
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք:
- մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի:
- անձնագրի պատճենը:

**Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9<sup>30</sup>-ից մինչև 12<sup>30</sup>-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:**

ՀՀ քաղաքացիները մրցութին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 18.02.2015թ.:**

Մրցութին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ (ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. 25342):